350·8
M·41

355.8
4-41

01 MAR 2010

ԿԵՆՍԱԹՈՇԱԿՆԵՐ ԵՒ ՆՊԱՍՏՆԵՐ

ՁԻՆԻՈՐՆԵՐԻ ԵՒ ՆՐԱՆՑ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.Р.А. Публичная Библиотека
7/XI 1922
именна Масникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

Թիֆլիս
Տպարան «ԹԱՄՈՒՆ» Ընկերութեան
1916 թ.

39.260

20 MAY 2013

300
1400-ԿԵ
350.8.ԿԵ
Կ-41

ԿԵՆՍԱԹՈՇԱԿՆԵՐ ԶԻՆԻՈՐՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Ո՞ր զինուորները եւ ի՞նչպիսի դէպքերուն են կենսաթոշակ ստանում՝

Կենսաթոշակ ստանում են այն զինուորները, ոնք վերադառնում են զօրքերից աշխատանքի նդունակութիւնը կամ բոլորովին կամ մասամբ որցրած, այն դէպքերում, երբ աշխատանքի ընդունակութիւնը կորցրել են զինուորական ծառայութեան միջոցին ստացած վէրքերից, ջղաձգքներից կամ հիւանդութիւններից--միևնոյն պատերազմի թէ խաղաղ ժամանակ։

Այս իրաւունքը ստանում են բոլոր զինուորները, առանց նայելու թէ նրանք երբ են ստացել վէրքերը կամ հիւանդութիւնները—վիրակով զինուոր եղած ժամանակ թէ իբրև պաշտօնից կանչուած զինուոր, կամ իբրև օպոլչենական ռատնիկ, կամաւոր և այլն։

Կենսաթոշակ ստանալու իրաւունք ունին նախիր բոլոր զինուորները առանց նայելու—ունին նրանք իրենց ապրուստի միջոցները թէ ոչ։

Կենսաթոշակների չափը

Զինուորներին հատնում են զանազան չափի կենսաթոշակներ, նայելով թէ նրանք որ աստի-

1003
79614

ճան են կորցրել աշխատանքի ընդունակութիւնը։

Նրանք, որոնք աշխատանքի ընդունակութիւնը կորցրել են բոլորովին և ոչ միայն իրենք այլ ևս չեն կարող ոչինչ վաստակել, այլ դեռ մի առանձին մարդ էլ պիտի նայի նրանց, — մացւում են առաջին կարգը և նրանց հասնում է 216 ռուբ. տարեկան։

Այս կարգով կենսաթոշակ ստանում են նրանք, որոնք զրկւել են երկու ձեռքից կամ ձեռքերի երկու թաթից, կամ երկու ոտքից, կամ մի ձեռքից և մի ոտքից միաժամանակ, կամ բնաւ չեն կարող բանեցնել ձեռքերն ու ոտքերը. որոնք կորցրել են երկու աչքերի տեսողութիւնը կամ որոնց երկու աչքերի տեսողութիւնը խիստ թուլացել է. որոնք խելագարւել են կամ զինուորական ծառայութեան ընթացքում ստացել են ընկնաւորութիւն (падучая болѣзнь), ցնցող կաթւած (дражательный параличъ), կամ մարմնի կէսի կամ երկու ձեռքի կամ երկու ոտքի կաթւած, խորունկ վերք (свищи՝ որովայնի աղիքի մէջ կամ ուրիշ ծանր անբուժելի հիւանդութիւն։

2-րդ կարգի կենսաթոշակ 168 ռուբ. տարեկան ստանում են այն զինուորները, որոնք բոլորովին կորցրել են աշխատելու ընդունակութիւնը, բայց առանձին մարդու հոգատարութեան պէտք չունին։ Այս կարգին համապատասխանում են նրանք, որոնք բոլորովին զրկւել են մի ձեռքից արմունկից վերև կամ բնաւ չեն կարող բանեցնել այդ ձեռքը. որոնք զրկւել են մի ոտքից՝ ծնկից վերև կամ չեն կարող բանեցնել ոտքը. որոնք զրկւել են երկու ձեռքերի առնւազն 6 մատից, հաշւելով դրանց թւում երկու բութ մատերը. որոնք ստացել են բանդաժով չպահւող մեծ աղեթափութիւն (грыжа). որոնց երկու աչքերի տեսողութիւնը խիստ թուլացել է և որոնք ստացել են ուրիշ որևէ ծանր հիւանդութիւն այն ծանր փաստաթղթերի թւից, որոնք յիշւած են փաստաւորին աշխատելու ընդունակութիւնից զրկող ծանր փաստաթղթերի առանձին ցուցակի մէջ։

3-րդ կարգով կենսաթոշակ են ստանում տարեկան 108 ռուբ. նրանք, որոնք աշխատելու ընդունակութիւնը կորցրել են ոչ բոլորովին, սակայն 70 տոկոսից ոչ պակաս։ Այս կարգին են պատկանում՝ մի ձեռքի կոբուստը արմունկից ներքև, մի ոտքի կորուստը ծնկից ներքև կամ նրանց դժւարութեամբ բանեցնելը. երկու բութ մատերի կորուստը (կամ բոլորովին չբանեցնելը), աջ ձեռքի երեք մատի կամ ձախ ձեռքի չորս մատերի, դրանց թւում և բութ մատի կորուստը կամ չբանեցնելը. երկու ականջների կատարեալ խլութիւնը, անուղղելի աղեթափութիւնները, նմանապէս և բանդաժներով չպահւող արդանդի պատերի և աճուկ-

ների թափումը. կաշվի անբուժելի հիւանդութիւններն ու խոցերը, որոնք յաճախ առաջացնում են շարժումը խանգարող սպիներ. կրնկի և ոտնատակի խեղումը, որ անկարելի է դարձնում ոտի վրայ կանգնելը, և ուրիշ շատ ծանր հիւանդութիւններ։

4-րդ կարգով կենսաթոշակ են ստանում տարեկան 66 ռուբ. այն զինուորները, որոնք կորցրել են աշխատելու ընդունակութիւնը 40 տոկոսից աւելի, բայց 70 տոկոսից պակաս։ Այս կարգին վերաբերում են՝ մի ձեռքի բութ մատի կորուստը, ձեռքի կամ ոտքի կարճանալը, ոչ լրիւ կաթուածները, ոսկորների հետ միացած և շարժումները դժուարացնող ընդարձակ հիւանդագին սպիները, ոտնատակի ոչ-ազատ շարժումը, հատ աղիքի խոշոր թափումը, տեսողութեան մասնակի թուլութիւնը և ուրիշ վնասուածքներ։

5-րդ կարգով կենսաթոշակ է տրւում 30 ռուբ. տարեկան։ Այս կարգին վերաբերում են այն վնասուածքները, որոնց պատճառով աշխատելու ընդունակութիւնը իջած է աւելի քան 10 տոկոս և 40 տոկոսից պակաս, օրինակ՝ մի աչքի տեսողութեան կորուստը կամ երկու աչքերի տեսողութեան կիսով չափ թուլանալը, դէմքի այլանդակումը սպիներից, վիզը կոտրելը, ցուցամատի կորուստը, մի ձեռքի երկու մատերի կորուստը, երբ միևնոյն ժամանակ բոթ մա-

տերը մնում են, թքագեղձերի անբուժելի վերքը, դէմքի այլանդակումը սպիներից կամ ուրիշ պատճառներից և մի քանի ուրիշ վնասուածքներ, որոնց համար առանձին ցուցակ կայ։

Եթէ այդպիսի վնասուածքներ ստացել է ունտեր-օֆիցերի կամ դրան համապատասխան կոչում ունեցող զինուորը, որը այդ կոչման մէջ ծառայել է ոչ պակաս քան մի տարի, այդ դէպքում նրան կենսաթոշակ է հատնում 10 տոկոս աւելի, և առաջին կարգով նշանակւում է 237 ռուբլի 60 կ. տարեկան, 2-րդ կարգով 184 ռ. 80 կ. տարեկան, 3-րդ կարգով 118 ռ. 80 կ., 4-րդ կարգով 72 ռ. 60 կ. և 5-րդ կարգով 33 ռ.

Իսկ սահմանուած ժամանակամիջոցից դուրս ոչ պակաս քան 5 տարի ծառայած զինուորների, նմանապէս և զաուրեադ-զինուորական չինովնիկների և զաուրեադ-պրապորշչիկների համար այդ կենսաթոշակներն աւելանում են 20 տոկոս, և նրանք ստանում են առաջին կարգով 259 ռ. 20 կ., 2-րդ կարգով—201 ռ. 60 կոպ., 3-րդով 129 ռ. 60 կ., 4-րդով—79 ռ. 20 կ. և 5-րդով—36 ռ. տարեկան, չհաշուելով այն նպաստները, որոնք հատնում են նրանց սահմանուած ժամանակից աւելի ծառայած լինելուն համար։

Բժշկական քննութիւն

Որոշելու համար, թէ զօրքերից արձակուող զինուորը որ աստիճան կորցրել է աշխատելու ընդունակութիւնը, նրանց քննում են կոմիսիաների մէջ։ Այդ քննութիւնը լինում է կամ բանակի թիկունքում, ուր քննում է թիկունքի էւակուցիոն կոմիսիան, կամ թէ կայսրութեան ներսը գտնուած կոմիսիաներում։

Իսկ եթէ զինուորները բժշկական քննութեան չեն եղել ենթարկուած էւակուցիոն կոմիսիաներում, նրանց քննում է զինուորական գոսպիտալներում կամ զինուորական լազարէթներում մի առանձին կոմիսիա, որը բաղկացած է ոչ պակաս քան երեք բժշկից, որոնց թւում պէտք է լինի աւագ բժիշկը. կոմիսիայի կազմի մէջ մտնում է նաև զինուորական վարչութիւնից նշանակուած զօրքի օֆիցեր։

Կոմիսիայի մէջ բժշկական քննութեան պէտք է ենթարկեն իւրաքանչիւրին՝ ստացած վէրքերի, վնասուածքների և հիւանդութիւնների պատճառով նրան արձակելիս, առանց նրա կողմից որևէ խնդիրք տրւելու։

Իսկ եթէ տուժած զինուորականին չքննեն կոմիսիայի մէջ, այդ դէպքում նրան պէտք է բժշկական քննութեան ենթարկեն արդէն զօրքերից արձակւելուց յետոյ Գաւառական կամ Քաղաքային Զինուորագրական Ատեաններում այն

քաղաքում, որի մօտ ապրելիս կըլինի արձակուած զօրականը։ Այստեղ բժշկական քննութիւնը կատարւում է երկու և միայն ծայրայեղ դէպքում մէկ բժշկի մասնակցութեամբ։

Այն դէպքերում, երբ զօրքից առանց բժշկական քննութեան վերադարձած զինուորը իր բնակութեան տեղում կըգտնուի այնպիսի ծանր դրութեան մէջ, որ մինչև անգամ չի կարող ինքն իրեն ներկայանալ կոմիսիային բժշկական քննութեան ենթարկւելու համար, այդպիսի դէպքերում նրա այդպիսի դրութեան մասին պէտք է վկայութիւն տայ բժիշկը, օրինակ զեմստուային, և այն ժամանակ այդպիսի զինուորին քննութեան կենթարկի նրա տանը այդ բանի համար Զինուորագրական Ատեանից նշանակուած բժիշկը։

Բոլոր յիշուած դէպքերում բժշկական քննութեան ենթարկելու հոգսը տուժածի վրայ չի ընկնում, այլ գործը պէտք է գնայ իր կարգով, առանց որ նա այդ մասին խնդրի։ Սակայն, կարող է պատահել, որ ծառայութիւնը թողնելիս նա որևէ պատճառով բժշկական քննութեան չի ենթարկւել բնաւ, թէև նա ստացած վնասուածքի պատճառով կորցրել է աշխատանքի ընդունակութիւնը. կարող է և այնպէս պատահել, որ վնասուածք թէև եղել է, բայց աշխատանքի ընդունակութեան վրայ չի ազդել սկզբում, իսկ յետոյ ժամանակի ընթացքում այդ վնասուածքի

հետևանքով կորել է աշխատելու ընդունակութիւնը։ Այսպիսի դէպքերում տուժողն արդէն ինքը պէտք է հոգայ, որ իրեն բժշկական քննութեան ենթարկէն։ Այս բանի համար ժամանակ է սահմանուած 5 տարի՝ ծառայութիւնը թողնելու ժամանակից սկսած։

Բժշկական քննութեան ենթարկելու և կենսաթոշակ նշանակելու համար կարելի է դիմել մերձաւոր իշխանութեանը—Զինուորական Կառավարչին (ВоинскійНачальникъ), Զինուորագրական Ատեանին (Воинское Присутствіе) կամ գաւառական ոստիկանութեանը։ Խնդրել կարելի է գրաւոր և կարելի է յայտնել բերանացի, և այդ ժամանակ խնդրողներին պէտք է յայտնեն, թէ որտեղ և երբ կըլինի նրանց բժշկական քննութիւնը։

Բժշկական քննութեան ենթարկուելու խնդիրքով կարելի է և ուղղակի ներկայանալ զինուորական-բժշկական հաստատութեանը արդէն ծառայութիւնից դուրս գալուց յետոյ ևս, բայց միայն այս դէպքում պէտք է վկայական ներկայացնել, որ վնասուածքը ստացած է ծառայութեան ժամանակ։

Կենսաթոշակ նշանակելու եւ տանելու կարգը

Որպէս զի ոչ մի թերացում չըլինի, զինուորի ստացած ամեն մի վնասուածք պէտք է գրի նրա

մօտ եղած զինուորական տեարի մէջ, իսկ եթէ այդպիսի տեար չկայ զինուորի մօտ, այն ժամանակ բուժարանից նրա ձեռքը պիտի տրի մի առանձին տոմս, որի վրայ գրւում են նրա բոլոր վէրքերը, վնասուածքները և հիւանդութիւնները և միևնոյն ժամանակ գրւում է, թէ երբ են նրանք ստացած և ինչ պատճառներով։

Բժշկական քննութիւնից յետոյ կոմիսիան վճռում է—տուժողը առմիշտ է կորցրել աշխատելու ընդունակութիւնը թէ առժամանակ։

Աշխատանքի ընդունակութիւնը առմիշտ կորցրածին կենսաթոշակ նշանակւում է ցմահ, իսկ ժամանակաւոր կենսաթոշակ նշանակւում է այն դէպքում, երբ կըվճռեն, որ ժամանակի ընթացքում աշխատելու ընդունակութիւնը կըվերադառնայ կամ կըփոխւի. այս դէպքում բժշկական վերաքննութեան համար կոմիսիան ժամանակ է նշանակում մի կամ երկու տարի յետոյ, բայց ոչ աւելի 3 տարուց։ Զինուորին բժշկական քննութեան ենթարկող կոմիսիան արձանագրութիւն է կազմում նրան բժշկական քննութեան ենթարկելու մասին և նշանակում է այն կարգը, որին վերաբերում է նրա աշխատանքի ընդունակութեան կորուստը։ Բժշկական քննութիւնից յետոյ կազմուած արձանագրութիւնը մի շաբաթից ոչ ուշ ուղարկւում է Զինուորագրական Ատեանը այնտեղ, ուր

ապրում է զինուորը։ Կենսաթոշակ նշանակելու որոշումը անում է Զինուորագրական Ատեանը և այդ որոշումը գրաւոր կերպով հաղորդում է տուժած զինուորին։

Կենսաթոշակը տրւում է Արքունի Գանձարանից (Казначейство), և կենսաթոշակ նշանակելու մասին Զինուորագրական Ատեանից հաղորդագրութիւնը ստանալուց յետոյ ամեն մի թոշակաւոր կարող է այդ ծանուցագրով ներկայանալ Արքունի Գանձարան կենսաթոշակը ստանալու։ Բայց կարելի է և անձամբ չգնալ Արքունի Գանձարան, այլ խնդրել, որ փողն ուղարկի Գիւղական Վարչութեան միջոցով։ Ընդամենն առաջին ստացման ժամանակ տրւում է հաշուեթերթ, որով այնուհետև թոշակաւորը ստանում է իր թոշակը։ Թոշակները տրւում են մի անգամից չորս ամսւայ համար առաջուց՝ յունուարին, մայիսին և սեպտեմբերին։

Կենսաթոշակը կարող է ստանալ թոշակաւորը ինքը, բայց կարող է ստացումը յանձնարարել և ուրիշ անձի։ Սակայն, եթէ ճանաչւած լինի, որ թոշակաւորը խելագար է, այդ դէպքում արդէն թոշակը տրւում է ոչ թէ նրա ձեռքը, այլ նրա կնոջը կամ երեխաներին, իսկ եթէ նա գտնւում է ուրիշ ազգականների կամ կողմնակի անձերի խնամքի տակ, այդ դէպքում կենսաթոշակը տրւում է նրանց ձեռքը այն բանիե

յետոյ, երբ նրանք վկայութիւն են ներկայացնում, որ նա իսկապէս իրենց մօտ է ապրում։ Իսկ այն դէպքերում, երբ այդպիսի հոգեկան հիւանդը տեղաւորւում է հիւանդանոցում արքունական հաշուին, նրան արդէն կենսաթոշակ չի հատնում, այլ նրա հիւանդանոցում գտնւելու ժամանակի ընթացքում նրա կնոջը կամ երեխաներին նշանակւում է նոյնպիսի կենսաթոշակ, ինչպիսին հատնում է այրիներին կամ բոլորովին որբերին։

Բժշկական վերաքննութեան մասին

Եթէ զինուորին բժշկական քննութեան ենթարկած ժամանակ կոմիսիան վճռի, որ նա աշխատելու ընդունակութիւնը չի կորցրել և մերժուի նրան կենսաթոշակ նշանակել, նա կարող է խնդրել, որ իրեն վերստին քննութեան ենթարկեն, սակայն մերժման օրից ոչ վաղ քան մի տարի յետոյ։ Խնդիրքով պէտք է դիմել Զինուորագրական Ատեանին (Присутствіе по Воинской Повинности)։

Իսկ այն դէպքերում, երբ տուժածին ցմահ կենսաթոշակ է նշանակւած, այն ինչ նրա առողջութիւնն աւելի վատացած կը լինի վերքերից, վնասւածքներից կամ հիւանդութիւններից, այդ դէպքում զինուորը կարող է խնդրել Զինուորագրական Ատեանին, որ բժշկական նոր քննութեան

ենթարկեն իրեն, սակայն այս մասին խնդրել կարելի է երկու տարուց ոչ վաղ։

Երբ զինուորին ժամանակաւոր թոշակ է նշանակուած և հասել է ժամանակը, երբ նա պէտք է բժշկական վերաքննութեան ենթարկուի, այդ դէպքում նա անպատճառ պէտք է ներկայանայ։ Եթէ չներկայանայ, թոշակը կըդադարեցուի բոլորովին։ Սակայն չներկայանալու օրուանից սկսած երկու տարուայ ընթացքում զինուորը կարող է խնդրամատոյց լինել, որ իրեն բժշկական վերաքննութեան ենթարկեն, և թոշակը կարող է նորից տրուել։

Ուտեստի եւ ճանապարհածախք

Այն դէպքում, երբ բժշկական քննութեան կամ վերաքննութեան ենթարկուելու համար զինուորը պէտք է տնից ուրիշ տեղ գնայ Զինուորական Առեանի պահանջմամբ, նրան տրուում է ուտեստի վող օրական 25 կ. և ճանապարհածախք գնալու և վերադառնալու համար, եթէ անցնելիք տարածութիւնը 25 վերստից աւելի է, իսկ 1 և 2 կարգի թոշակաւորների համար—եթէ այդ տարածութիւնը 15 վերստից աւելի է։

Ուստի և ճանապարհածախք տրուում է նաև նրանց, որոնք գնում են վերաքննութեան ենթարկուելու իրենց տուած խնդիրքով, եթէ վերաքննութիւ-

նից յետոյ կընդունուի, որ նրանք իրաւունք ունին կենսաթոշակ ստանալու։

Որ ժամանակից է տրում կենսաթոշակը

Տուժած զինուորի համար նշանակուած կենսաթոշակը նա ստանում է այն օրից, երբ դադարեցուում է նրան պետական գանձարանից ապրուստի վող տալը, իսկ եթէ նա կանչուած է եղել պահեստից կամ օպոլչենիայից և նրա ընտանիքը նպաստ է եղել ստանում պետական գանձարանից, այդ դէպքում կենսաթոշակը տրուում է այն օրից, մինչև երբ տրուած է եղել այդ նպաստը ընտանիքին։ Իսկ այն զինուորներին, որոնց կենսաթոշակ չի նշանակուած զօրքերից արձակուելիս և որոնց կենսաթոշակ է նշանակուած արդէն յետոյ իրենց խնդիրքով, կենսաթոշակը տրուում է այն օրից, երբ նրանք խնդիրք են եղել տուած, որ կենսաթոշակ տրուի։

Կենսաթոշակի ժամանակատը եւ առմիշտ դադարեցումը

Պետական բարեգործական հաստատութիւն մտած թոշակաւորը կենսաթոշակից զրկուում է այդ հաստատութեան մէջ գտնուած ժամանակի ընթացքում։ Կենսաթոշակ ստանալու իրաւունքից նա զրկուում է նաև դատի կամ նախնական քննութեան ենթարկուելու առթիւ բանտարկուած ժամանակ։ Այդ ժամանակի ընթացքում նրա կի-

նը կամ երեխաները ստանում են իրենց անկախ կենսաթոշակը, որպիսին հասնում է այրուն կամ բոլորովին որբերին։

Պահած կենսաթոշակը տրւում է այդպիսի ձերբակալածին ամբողջ ժամանակի համար, դուրս գալով կնոջ կամ երեխաների ստացած փողերը, եթէ նրա դատական գործը դադարեցւի կամ դատարանը նրան արդարացնի։

Դատավճռից յետոյ կենսաթոշակը դադարեցւում է առմիշտ և այդ կենսաթոշակը ստանալու իրաւունք չունին ոչ կինը, ոչ զաւակները, եթէ թոշակաւորը պատժի է դատապարտւած բոլոր իրաւունքներից կամ միքանի իրաւունքներից զրկւելով, նմանապէս և առանց իրաւունքներից զրկւելու, եթէ նա դատապարտւած է գողութեան, սրիկայութեան և վաշխառութեան համար, պարզապէս գողացած ապրանք գնելուն կամ խաբեբայութեամբ ստացած գոյքի համար, գողացած ապրանքը թաղցնելուն և պահ տւած գոյքը իւրացնելուն համար։

Նմանապէս առմիշտ դադարեցւում է կենսաթոշակը կուսակրօնութիւն ընդունողներին, ռոճկով և կենսաթոշակ ստանալու իրաւունքով պետական ծառայութեան մտնողներին։

Այն դէպքում, երբ թոշակաւորը թողնում է պետական ծառայութիւնը առանց կենսաթոշակի կամ աւելի պակաս կենսաթոշակով, քան

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
S.S.S.R. Публичная Библиотека
7/XI-1922
Ереван, Мясницкая
Գ. ՀԵՍԱՍԵՒՅԱՆԻ ԱՆՎԱՆ

հասնում էր նրան առաջ, դադարեցրած զինուորական կենսաթոշակը նորոգւում է։ Դադարեցւում է կենսաթոշակը նմանապէս և նրանց, որոնք արտասահման գնալով մնացել են թոյլատրւած է ժամանակից աւելի կամ որոնք օտարերկրեայ հպատակութիւն են ընդունել։

Զինուորների կենսաթոշակների վրայ ոչ մի արգելք չի կարելի դնել նրանց պարտքերի և նրանց վրայ դրւած տուգանքների համար։

1003
11963

Գանգատներ

Կենսաթոշակ նշանակելու մասին Զինուորագրական Ատեանից ծանուցում ստացողը կարող է ծանուցումը ստանալու օրից յետոյ չորս շաբաթւայ ընթացքում գանգատ տալ Նահանգական Զինուորագրական ատեանին, եթէ կարծում է, որ կենսաթոշակը անճիշտ է նշանակւած։

Այս գանգատը պէտք է ուղարկել կամ տալ այն գաւառական կամ քաղաքային Զինուորագրական Ատեանին, որը որոշում է կայացրել կենսաթոշակի մասին, իսկ Ատեանն այնուհետև արդէն ինքն է ուղարկում գանգատը Նահանգական Զինուորագրական Ատեանին։

Գանգատը քննելու օրի մասին Ատեանը ծանուցանում է գանգատաւորին և գանգատաւորը կարող է ներկայ լինել այնտեղ, բացատրութիւններ տալ և խնդրել, որ իրեն բժշկական վերաքննութեան ենթարկեն։

Նահանգական Զինուորագրական Ատեանի որոշումների դէմ կարելի է գանգատ ուղարկել Կառավարիչ Սենատի 1-ին Դեպարտամենտին երկու ամսայ ընթացքում, և այդպիսի գանգատները տրւում են որոշումը կայացնող Նահանգական Ատեանին։

Գէորգեան խաչի եւ Գէորգեան մեդալի արժանացած զինուորներին դրամ տալը

Գէորգեան խաչի արժանացած իւրաքանչիւր զինուորի՝ քաջագործութիւնը կատարած օրից տարեկան փող է նշանակւում հետեւեալ չափով. 4-րդ աստիճանի համար 36 ռ., 3-րդ աստիճանի համար 60 ռ., 2-րդ աստիճանի համար 96 ռուբլի և 1-ին աստիճանի համար 120 ռուբ.։

Գէորգեան մեդալի արժանացածին քաջագործութիւնը կատարած օրից ամեն տարի փող է տրւում հետեւեալ չափերով. 4-րդ աստիճանի համար 12 ռ., 3-րդ աստիճանի համար 18 ռ., 2-րդ աստիճանի համար 24 ռ. և 1-ին աստիճանի համար 36 ռուբ.։

Այս դրամը իսկական ծառայութեան մէջ եղած զինուորներին տրւում է իբրև լրացուցիչ ռոճիկ, իսկ իսկական ծառայութիւնից արձակուելուց յետոյ՝ իբրև կենսաթոշակ Արքունի Գանձարանից, այն կենսաթոշակներից զատ, որոնք հատնում են ստացած վնասուածքների համար։

Գէորգեան խաչով կամ Գէորգեան մեդալով պարգեւատրուածի այրին ամուսնու մահից յետոյ ստանում է նրա կենսաթոշակը դադարեալ մի տարի (Օրէնսդր. Ժող. 1913 թ. № 184)։

ԶԻՆԻՈՐՆԵՐԻ ԱՅՐԻՆԵՐԻ ԵՒ ՈՐԲԵՐԻ ԿԵՆՍԱԹՈՇԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Որ դէպքերում են զինուորների այրիները եւ բոլորովին որբ մնացած զաւակները կենսաթոշակ ստանում՝

Զինուորների այրիները և բոլորովին որբ մնացած զաւակները կենսաթոշակ են ստանում պետական գանձարանից հետեւեալ դէպքերում.

1) Երբ զինուորը սպանուած է պատերազմում, մահացել կամ կորել է այնտեղ անհետ, կամ ինքն է իրեն կեանքից զրկել, կամ մեռել է այն վերքերից կամ հիւանդութիւններից, որ ստացել է պատերազմի առանձին պայմանների հետեւանքով։

2) Երբ պատերազմի մէջ եղած զինուորը մեռել է պատերազմից վերադառնալուց յետոյ, բայց ոչ աւելի քան մի տարի յետոյ սկսած այն օրից, երբ նրա զօրամասը դրուած է խաղաղ ժամանակի դրութեան մէջ կամ արձակուած է։ այս դէպքում այրին կամ զաւակները կենսա-

թոշակ խնդրելիս պարտաւոր չեն դոկումենտներ ներկայացնել նրա մահուան պատճառի մասին։

4) Երբ պատերազմի մէջ եղած զինուորը մեռել է մի տարի յետոյ, բայց ոչ 5 տարի ուշ այն օրից, երբ նրա զօրամասը դրուած է խաղաղ ժամանակի դրութեան մէջ կամ արձակուած է. այս դէպքում նրանցից, որոնք կենսաթոշակ են խնդրում, պահանջւում է ներկայացնել դոկումենտներ այն մասին, որ մահը առաջացել է պատերազմի պատճառած վէրքերից կամ հիւանդութիւններից։

4) Երբ զինուորը մեռել է խաղաղ ժամանակ զինուորական ծառայութեան մէջ կամ 3 տարուայ ընթացքում ծառայութիւնը թողնելուց յետոյ. այս դէպքում այրիներն ու որբերը կենսաթոշակ խնդրելիս պէտք է վկայութիւն ներկայացնեն, որ զինուորը մեռել է զինուորական ծառայութիւնը կատարելուց կախուած վէրքերից կամ հիւանդութիւններից։

5) Երբ զինուորը կենդանի ժամանակ ինքն էր կենսաթոշակ ստանում, այդ դէպքում այրիներն ու որբերը կարող են կենսաթոշակ ստանալ, բայց միայն այն դէպքում, երբ մեռնողը ամուսնացած է եղել ոչ պակաս քան մի տարի առաջ իր մահից։

Ուր է տրտում խնդիրքը կենսաթոշակ ստանալու մասին եւ ինչ դոկումենտներ են պահանջւում դրա համար

Կենսաթոշակ ստանալու համար խնդիրքը կարող է տրւել գրաւոր և կարող է յայտնւել բերանացի։ Խնդիրքը կարելի է տալ Արքունի Գանձարանին (КазеннаяПалата) կամ Գաւառականզեմստուային Վարչութեանը (Уѣздная Земская Управа), Զեմստուային Կառավարչին (Земскій Начальникъ), Քաղաքային Վարչութեանը (Городская Управа), Գաւառական կամ Քաղաքային Ոստիկանական Վարչութեանը (Уѣздное или Городское Полицейское Управленіе), Զինուորական Կառավարչին (Воинскій Начальникъ), կամ Վոլոստի Վարչութեանը (Волостное Правленіе)։

Որպէսզի կենսաթոշակ ստանալու գործը չձգձգւի, խնդրքի հետ պէտք է ներկայացնել հետևեալ դոկումենտները.

1) Այրու ամուսնութեան մետրիկան քահանայից կամ Կոնսիստորիայից։

2) Բոլորովին որբ մնացած զաւակների համար—նրանց ծննդեան մետրիկաները։

3) Վկայութիւն այն մասին, որ խնդրողների ամուսինը կամ հայրը զինուոր է եղել պատերազմի մէջ և այնտեղ սպանուած է կամ կորել անհետ, կամ մեռել ծառայութեան ժամա-

նակ ստացած վէրքերից կամ հիւանդութիւններից, մի խօսքով այն բոլորի մասին, ինչ որ օրէնքով պահանջւում է կենսաթոշակ ստանալու համար։ Բացի սրանից վկայութիւն է պահանջւում Գիւղական Վարչութիւնից, որ խնդրողները կենդանի են և չեն կորցրել կենսաթոշակ ստանալու իրաւունքը։ Վկայութիւնները Գիւղական Աւագը պահանջած ժամանակ պարտաւոր է տալ ձրիաբար։

Երբ խնդրողների համար դժւար է դոկումենտներ ձեռք բերել, կենսաթոշակ ստանալու խնդիրքը կարող է տրւել և առանց այդ դոկումենտների, և այդպիսի դէպքերում այն հաստատութիւնները, ուր տրւած է խնդիրքը, իրենք են պարտաւոր հաւաքել դոկումենտները։

Բերանացի տրւած խնդիրքը այն տեղում, ուր տրւած է նա, պարտաւոր են գրել և արձանագրութիւն կազմել այդ մասին։

Կենսաթոշակների չափը

Այրիներին և որբերին զանազան չափի կենսաթոշակներ են տրւում, նայելով թէ զինւորական ինչ կոչումի տէր է եղել մեռած զինւորը և որքան տարի է եղել ծառայութեան մէջ։

Երբ մեռածը բարձր կոչում է ունեցել, օրինակ ունտեր-օֆիցեր կամ ֆելդֆեբէլ է եղել և սահմանւած ժամանակամիջոցից դուրս ծառայել է ոչ պակաս քան հինգ տարի, այն ժամանակ նրա այրին կենսաթոշակ է ստանում 84 ռ. տարեկան։ Իսկ ունտեր-օֆիցերի և ուրիշ բարձր կոչումների տէր և այդ կոչումների մէջ ոչ պակաս քան մի տարի ծառայող զինւորների այրիներին հասնում է 60 ռ. տարեկան։ Նոյնպիսի 60 ռ. կենսաթոշակ տրւում է սահմանւած ժամանակամիջոցից դուրս ոչ պակաս քան 5 տարի ծառայած հասարակ զինւորի այրուն։

Բոլոր կոչումների զինւորների միւս բոլոր այրիները կենսաթոշակ են ստանում 48 ռ. տարեկան։

Այն դէպքերում, երբ զինւորը մինչև իր մահը ինքն էր կենսաթոշակ ստանում, բայց պակաս քան այն կենսաթոշակը, որ հասնում է այրուն, այդպիսի դէպքերում այրուն կենսաթոշակ է տրւում ամուսնու ստացած կենսաթոշակի չափով։

Եթէ այրին իրաւունք ունի կենսաթոշակ ստանալու ուրիշ որևէ օրէնքի հիման վրայ, բացի զինւորական կենսաթոշակից, այն ժամանակ նա կարող է ստանալ ոչ թէ երկու կենսաթոշակներն էլ, այլ նրանցից միայն մէկը, որը մեծ է։

Բոլորովին որբերը կենսաթոշակ են ստանում հետևեալ չափերով. եթէ նրանք երեքն են կամ աւելի, այդ դէպքում նրանք ստանում են բոլորը միասին նոյնքան, որքան որ պէտք է

ստանայ այրին (84 ռ., 60 ռ., 48 ռ.), եթէ նրանք երկուսն են, այդ դէպքում նրանք միասին ստանում են երեք քառորդը այն կենսաթոշակի, որ պէտք է ստանայ այրին (63, 45 կամ 36 ռ.), իսկ մէկը ստանում է կէսը այրու կենսաթոշակի (42, 30 կամ 24 ռ.)։

Բոլորովին որբերը կենսաթոշակը ստանում են մինչև 17 տարեկան հասակը, բայց եթէ այդ հասակն անցնելուց յետոյ ապրուստի միջոցներ չունին - ընդունակ չեն աշխատանքի, հիւանդ են և խնամքի կարօտ, այդ դէպքում կարող են կենսաթոշակ ստանալ 17 տարեկան դառնալուց յետոյ էլ։

Երբ մեռած զինուորից մնան զաւակներ նախկին ամուսնութիւններից և նրանց խորթ մայրը—այրին, այդ դէպքում նրանք միասին, զաւակներն ու այրին, կենսաթոշակ են ստանում ոչ աւելի այն կենսաթոշակից, որ ստանում էր մեռածը կենդանութեան ժամանակ։

Բոլորովին որբերը այս զինուորական կենսաթոշակից զատ կարող են ստանալ միևնոյն ժամանակ ուրիշ կենսաթոշակներ ևս, բայց եթէ նրանց նպաստ է հատնում Ալէքսէևսկի Կոմիտէից, այդ դէպքում նրանք կարող են ստանալ երկուսից մէկը—կամ նպաստը, կամ կենսաթոշակը, նայելով թէ որն է նրանց համար աւելի շահաւէտ։

Որ ժամանակից է հատնում կենսաթոշակը

Կենսաթոշակը այրուն և որբերին հատնում է այն օրանից, երբ նրանք գրաւոր կամ բերանացի խնդիրք են տուել կենսաթոշակ ստանալու համար։ Իսկ երբ մեռած զինուորն ինքն է եղել կենսաթոշակ ստանալիս, այդ դէպքում այրուն և որբերին կենսաթոշակ հատնում է նրա մահուան օրից կամ այն օրից, մինչև երբ նա ինքը կենսաթոշակ է եղել ստանալիս։

Կենսաթոշակները տալու գործը

Կենսաթոշակները տրւում են կամ իրենց թոշակաւորներին, կամ նրանցից լիազօրւած անձին։ Եթէ թոշակաւորները հոգեկան հիւանդներ են, այդ դէպքում նրանց կենսաթոշակը տրւում է նրանց ազգականներին կամ կողմնակի անձերի և սրա համար նրանք պէտք է վկայութիւն ներկայացնեն, որ այդ հոգեկան հիւանդները իրենց մօտ են ապրում և իրենք են պահում նրանց։

Կենսաթոշակները տրւում են յունուարին, մայիսին և սեպտեմբերին չորս ամսւայ համար առաջուց Արքունի Գանձարանից (Казначейство) կամ թոշակաւորների խնդրանօք Գիւղական Վարչութիւնից առանձին հաշուեթերթերով, որոնք տրւում են Արքունի Գանձարանից։ Կենսաթոշակների վրայ ոչոք իրաւունք չունի արգելք դնելու կամ նրանցից մաս-մաս առնելու պարա-

քերը, յետնեալ տուրքերը և կատարողական թերթերով հպանելիք դումարները։

Բոլոր այրիներն ու բոլորովին որբերը իրաւունք ունին կենսաթոշակ ստանալու, առանց նայելու՝ ունին նրանք իրենց ապրուստի միջոցները թէ ոչ։

Կենսաթոշակների ժամանակատը և առ միշտ դադարեցումը

Այն այրիներն ու որբերը, որոնք գտնւում են պետական բարեգործական հաստատութեան, աղքատանոցի, ապաստարանի մէջ, կենսաթոշակ չեն ստանում, քանի այնտեղ են։ Նմանապէս դադարեցւում են կենսաթոշակներն այրուն և որբերին ամբողջ ժամանակ, երբ նրանք գտնւում են բանտի մէջ որևէ յանցանքի համար դատի յանձնելու պատճառով. նրանք կարող են կենսաթոշակները ստանալ բոլոր անցած ժամանակի համար, եթէ նրանց գործը դադարեցւի մինչև դատը կամ եթէ դատարանը արդարացնի նրանց։

Կենսաթոշակները բոլորովին դադարեցւում են հետևեալ դէպքերում.

1) Երբ այրին կամ որբերը կուսակրօնութիւն են ընդունել։

2) Երբ նրանք մտել են պետական ծառայութիւն, որ նրանց կենսաթոշակ ստանալու իրաւունք է տալիս. բայց եթէ նրանք թողնեն ծառայութիւնը կենսաթոշակ ստանալու ժամանակամիջոցը լրանալուց առաջ, այդ ժամանակից սկսած զինուորական կենսաթոշակը պէտք է տրւի նրանց։

3) Երբ այրին կամ որբերը դատարանով զրկւած են բոլոր կամ միքանի իրաւունքներից, կամ թէ իրաւունքներից չեն զրկւած, բայց պատժի են դատապարտւած գողութեան կամ խաբեբայութեան կամ վաշխառութեան համար, կամ պարզապէս գողացած կամ խաբեբայութեամբ ստացած գոյքը գաղելուն ու գնելուն կամ դրաւ վերցնելուն, կամ թէ իրենց պահ տւած գոյքը իւրացնելուն համար։

4) Երբ նրանք մնացել են արտասահմանում աւելի երկար ժամանակ, քան թոյլ է տալիս օրէնքը։

5) Երբ նրանք ուրիշ պետութեան հպատակութիւն են ընդունել։

6) Երբ այրիները կամ որբերը ամուսնացել են։

Դ ա ն գ ա տ ն ե ր

Գիւղական Վարչութիւնների, Զեմստւային Կառավարիչների, Ոստիկանութեան, Զինուորական Կառավարիչների, Զեմստւային և Քաղաքային Վարչութիւնների դէմ գանգատները տրւում են Նահանգապետին։ Զինուորների այրիներին և որբերին կենսաթոշակ նշանակելու գոր-

ծերի վերաբերմամբ Արքունի Գանձարանների անկանոն գործողութիւնների կամ մերժման դէմ գանգատները սրւում են Ֆինանսների Մինիստրին նոյն Արքունի Գանձարանի միջոցով։

Նպաստներ Ալէքսէեւսկի Գլխաւոր Կոմիտեից

1914 թւին սկսւած պատերազմի ընթացքում սպանւած կամ անհետ կորած կամ աշխատանքի ընդունակութիւնը կորցրած, կամ պատերազմը վերջանալուց ոչ ուշ քան մի տարի յետոյ պատերազմի մէջ ստացած վէրքերից կամ հիւանդութիւնից մեռած զինւորների զաւակները կարող են նպաստներ ստանալ Ալէքսէեւսկի Գլխաւոր Կոմիտեից։

Կոմիտեը նպաստներ է տալիս մայր ունեցող մեռած կամ սպանւած զինւորի զաւակներին 24 ռ. տարեկան իւրաքանչիւր այդպիսի մի որբի համար, եթէ նա ապրում է գիւղում։ Քաղաքներում այդ նպաստը կարող է մեծացւել մինչև 30 ռ. տարեկան, իսկ աւելի քան 150 հազար բնակիչ ունեցող մեծ քաղաքներում—մինչև 42 ռ. տարեկան։

Նոյնպիսի նպաստ կարող է տրւել նաև կենդանի մնացած, բայց աշխատանքի ընդունակութիւնը կորցրած զինւորի զաւակներին, եթէ այդ զաւակներն իրենք ապրուստի ոչ մի միջոց չունեն և չեն ստանում ոչ մի տեղից։

Պատերազմում մահացած զինւորի անչափահաս

հաս եղբայրներն ու քոյրերը, եթէ նրանք բոլորովին որբ են և ապրուստի ոչ մի միջոց չունեն, նմանապէս կարող են առանձին յարգելի դէպքերում նպաստներ ստանալ, ինչպէս և որբ զաւակները։

Իսկ պատերազմի մէջ մահացած զինւորի բոլորովին որբ մնացած զաւակները կարող են Ալէքսեւսկի Կոմիտեից նպաստներ ստանալ 40 տոկոս աւելի, քան մայր ունեցող որբերը։ Նրանց կարող են նպաստներ նշանակել գիւղերում մինչև 33 ռ. 60 կ. տարեկան և քաղաքներում մինչև 58 ռ. 80 կ. տարեկան։

Նպաստները դադարեցւում են 16 տարեկան դառնալուց յետոյ։

Բացի այս նպաստներից Ալէքսէեւսկի Կոմիտեը աջակցում է զինւորների զաւակների սկզբնական կրթութիւնը ապահովելուն տաք հագուստներով, սանտրաններով և դասական պիտոյքներով, այդ բաները ձեռք բերելու համար տալով միանւագ 15 ռուբլի։

Նպաստ ստանալու համար խնդիրքները տրւում են Ալէքսէեւսկի Գլխաւոր Կոմիտեին, նահանգապետներին կամ քաղաքապետներին։ Ալէքսէեւսկի Գլխաւոր Կոմիտեի հասցէն—г. Петроградъ, Владимірскій проспектъ, 19.

ՊԱՏԵՐԱԶՄԻ ԿԱՆՉՒԱԾՆԵՐԻ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ՆՊԱՍՏՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ով ունի իրաւունք նպաստ ստանալու

Պետական նպաստներ տրւում են այն բոլոր զինուորների ընտանիքներին, որոնք զօրահաւաքի առիթով սահմանւած ժամանակից աւելի պահւում են իսկական ծառայութեան մէջ կամ զօրահաւաքի ժամանակ կանչւում են պահեստից, օպոլչենիայից, կամ ընդունւում են իբրև կամաւոր զինուորական դրուժինաների մէջ. Բայց նպաստ ստանալու հաւասար իրաւունք ունին կանչւածի ընտանիքի ոչ բոլոր անդամները։

Զինուորների կանայք և երեխաները օրէնքով նպաստ ստանալու իրաւունք ունին բոլոր դէպքերում, եթէ միայն այդ նպաստից չեն հրաժարւել, առանց նայելու՝ ունին նրանք արդեօք իրենց սեփական ապրուստի միջոցները, թէ ոչ։ Իսկ կանչւած զինուորի հայրը, մայրը, տատը, եղբայրներն ու քոյրերը կարող են պետական նպաստ ստանալ միայն այն ժամանակ, եթէ նա մինչև ծառայութեան կանչւելը պահելիս է եղել նրանց իր աշխատանքով։ Կանչւածի խորթ հայրը, խորթ մայրը, չորդեգրած խորթ երեխաները, խորթ եղբայրներն ու քոյրերը ամենևին իրաւունք չունին օգնութիւն ստանալու պետական

գանձարանից։ Նմանապէս նպաստ չեն ստանում կանչւածի 17 տարեկան և աւելի մեծ զաւակները, եթէ նրանք ընդունակ են աշխատանքի, նոյնպէս և նրա ամուսնացած աղջիկները։ Իսկ 5 տարեկանից պակաս զաւակներին նպաստը տրւում է կիսով չափ։ Պետական նպաստներ տրւում են միայն օրինաւոր ընտանիքի ա դամներին։

Պատերազմի կանչւած պետական հաստատութիւնների ազատ-վարձւած ծառայողների ընտանիքները չեն կարող նպաստներ ստանալ այն դէպքում, եթէ նրանց շարունակում են տալ լիովին կամ մասամբ այն ռոճիկը, որ ստանում էր կանչւածը։ Իսկ պետական գործարանների, արհեստանոցների և ուրիշ ձեռնարկութիւնների պատերազմի կանչւած վարպետների, բանւորների և ատորին ծառայողների ընտանիքները ստանում են ընդհանուր նպաստ, թէկուզ բացի դրանից նրանց տրւէր իրենց կերակրողի նախկին աշխատավարձի մի որոշ մասն ևս։

Մասնաւոր անձերից և հաստատութիւններից ընտանիքի ստացած օգնութիւնը ոչ մի դէպքում չի զրկում նրան պետական նպաստ ստանալու իրաւունքից և չի քչացնում այդ նպաստի քանակը։

Նպաստի քանակը

Նպաստները տրւում են փողով։ Նահանգական և Շրջանային Ատեանը նշանակում է, թէ

իւրաքանչիւր տեղում ամսական որքան նպաստ է հասնում մարդագլուխ։ Այդ նպաստը որոշւում է այնպիսի հաշւով, որ դրանով կարելի լինի գնել ոչ պակաս քան 1 փութ 28 ֆունտ ալիւր, 10 ֆունտ կրուպա, 4 ֆունտ աղ և 1 ֆունտ ձէթ։ Եթէ այդ մթերքների գները խիստ փոխւեն, Առաջնորդը կարող է նպաստը աւելացնել կամ պակասեցնել։

Ամբողջ ընտանիքի ստացած նպաստի քանակը կախւած է այն բանից, թէ ընտանիքի քանի անդամներ իրաւունք ունին նպաստ ստանալու. այդպիսի անդամների թւի համեմատ էլ տրւում է նպաստը. ընդ սին 5 տարեկանից պակաս երեխաների համար հաշւում է նպաստի կէսը։

Ով ժամանակից են սկսում եւ երբ են վերջացնում նպաստ տալը

Կանչւած զինւորի ընտանիքին նպաստը հասնում է այն օրւանից, երբ նա գնացել է ծառայութեան, իսկ եթէ նա գտնւում է եղել իսկական ծառայութեան մէջ զօրակոչից առաջ, այդ դէպքում նպաստը հասնում է այն օրւանից, երբ վերջանում է նրա խաղաղ ժամանակի համար նշանակւած ծառայութեան ժամանակամիջոցը։ Իսկ ընտանիքին դադարեցնում են նպաստ տալ այն օրւանից, երբ կանչւած զինւորը ծառայութիւնից վերադառնայ տուն։ Իսկ եթէ նա տուն

է վերադարձրած անընդունակութեան պատճառով կամ կորել է անհետ, և նրան կամ նրա ընտանիքին մշտական կենսաթոշակ է հասնում, այդ դէպքում նրա ընտանիքին դադարեցնում են նպաստ տալ միայն այն բանից յետոյ, երբ այդ մշտական կենսաթոշակը նշանակւած կը լինի, բայց ոչ մի պայմանով մի տարի ուշ այն օրից, երբ այն զօրամասը, որի մէջ ծառայում է եղել կանչւածը, խաղաղ ժամանակի դրութեան մէջ է դրւած կամ արձակւած։

Օգնութիւն այն երեխաներին, որոնք մնացել են անխնամ

Եթէ զօրահաւաքի ժամանակ կանչւածը այրի է, կամ թէև այրի չէ, բայց նրա կինը չի կարող, ինչպէս հարկաւոր է, նայել երեխաներին հիւանդութեան կամ շարունակ բացակայ լինելու պատճառով, այդ դէպքում Գիւղական կամ Քաղաքային Հոգաբարձութիւնը պէտք է հոգայ, որ զինւորի անխնամ մնացած փոքրահասակ երեխաների, եղբայրների և քոյրերի համար խնամակալ կամ հոգաբարձու նշանակի, կամ նրանք տրւեն իրենց ազգականներին կամ կողմնակի վստահելի մարդու կամ թէ տեղական ապաստարանը, և ապա թէ պէտք է տալ այդ անձերին այն նպաստը, որ նշանակւած է այդ երեխաների համար։

Ինչ կարգով են տրում նպաստները

Զօրահաւաք յայտարարելուց յետոյ գիւղական ժողովները, գիւղի մշտական բնակիչները ըստ ցանկութեան ինչպէս գիւղացիներից, այնպէս և ուրիշ դասակարգերից ընտրում են Գիւղական Հոգաբարձութիւններ։ Մի քանի քաղաքներում գործում են Քաղաքային Հոգաբարձութիւններ։

Հոգաբարձութիւնները, իսկ եթէ նրանց չեն ընտրել, Գիւղական Աւագները և Քաղաքային Վարչութիւնները պէտք է ճշտիւ քննեն և ստուգեն, թէ իրենց շրջանում բոլոր դասակարգերի զինուոր կանչուածների որքան ընտանիքներ են ապրում և իւրաքանչիւր ընտանիքի մէջ քանի հոգի իրաւունք ունի նպաստ ստանալու։ Նպաստը նշանակում են Գաւառական Հոգաբարձութիւնները, իսկ մի քանի քաղաքներում Հասարակական Հոգաբարձութիւնները։ (Զօրահաւաքից յետոյ սկզբում այդ բանն անում էին Գաւառական ժողովները)։ Նպաստը բաշխելու մասին առանձին յայտարարութիւններ են փակցնում։ Իւրաքանչիւր ընտանիքի, որին պետական նպաստ է նշանակուած, տրւում է առանձին հաշուետոմար, որի մէջ գրում են թէ ընտանիքի մէջ քանի հոգի կայ և ով պէտք է նպաստ ստանայ։ Այդ տոմարը ստանում է զինուորի կինը կամ ընտանիքի մեծը, եթէ նրան նպաստ է տրւում։ Ամեն մի նպաստ

ստացող, 21 տարեկանից բարձր, եթէ ուզի՝ կարող է խնդրել, որ իրեն առանձին հաշուետոմար տան իր անունով։ Գիւղերում նպաստներ տալիս են Գիւղական Վարչութիւնների մէջ Հոգաբարձութեան անդամներից մէկի ներկայութեամբ իւրաքանչիւր 3 ամիսը մէկ անգամ, իսկ քաղաքներում—Քաղաքային Վարչութիւնների կամ Հոգաբարձութիւնների մէջ ամեն ամիս, և բոլոր տրուած փողերը գրւում են հաշուետոմարների մէջ։ Եթէ ումիցէ անկանոն են գրել և նրան հասանելիք նպաստը չեն տալիս, այդ մասին պէտք է յայտնել քաղաքներում—Քաղաքային Հոգաբարձութեան, իսկ ուր այդպիսին չկայ—Քաղաքային Վարչութեանը, իսկ գիւղերում—Գիւղական Վարչութեանը, իսկ ուր այդպիսին չեն ընտրել — Գիւղական Աւագին։

Ում պէտք է զանգատուել, եթէ անկանոն կերպով մերժում են նպաստ տալ

Անկանոն կերպով նպաստը մերժող Գիւղական Հոգաբարձութեան դէմ զանգատուել կարելի Զեմստուային կառավարչի միջոցով Գաւառական Հոգաբարձութեանը։ Եթէ մերժողը Քաղաքային Հոգաբարձութիւն է, այդ դէպքում զանգատ կարելի է տալ ուղղակի Գաւառական Հոգաբարձութեանը կամ Համաքաղաքային Հոգաբարձութեանը, եթէ այդպիսին գոյութիւն ունի։ Գաւառական և Համաքաղաքային Հոգաբարձութիւն-

ների որոշումների դէմ կարելի է գանգատ տալ մի ամսւայ ընթացքում սկսած այն օրից, երբ այդ որոշումը յայտնուած է, Նահանգական կամ Շրջանային Ատեանին։ Իսկ Ատեանի վճիռը վերջնական է և այլ ևս ոչ մի տեղ չի կարելի գանգատ տալ։

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.Р.А. Публичная Библиотека
7/XI. 1922
Именна, Мясникиана
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

Ծանօթութիւն.—Այս գործերը վարող բոլոր իշխանաւոր անձերի մօտ և հաստատութիւնների մէջ գտնւում են բոլոր այն տեղեկութիւններն ու օրէնքի յօդուածները, որոնց հիման վրայ կազմուած է այս գրքոյկը։

ՀՀ Ազգային գրադարան
NL0206716

39. 260